սբ. եմ. և եկն եհաս ի քաղաքս Բաղէշ և տեսեալ զպատ-մագիրս (Մովսէս Խորենացի, Բիւզանդ եւ Արիստակէս Լաստ.) և ցանկացեալ սմա և ետ գրել զսա եռափափաք սրտիւ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց հօրն Պողոսին եւ մօրն Օղլան փաչին և եղբարցն Արապշին և հանդուցեալ եղբարցն Փաչային եւ Նալիջանին եւ եղբօր որդւոցն Նազարին եւ Փաչային, Միրիբէկին եւ Պատիշտային...»։ (Խաչ. Ցուց. Տետր ԿԱ. էջ 4721-22, ՄՁ. թ. 338 Ձեռագրին յիշատակարանը)։

Ազարիա կթղ. եղած է նաև պտք. Կ. Պոլսի (1591-1592). կը կրէր «Պատրիարք Երուսաղեմայ» տիտղոսը, ինչպէս յայտնի է իր անձնական կնիքէն. (Պաղեսան էջ 308), վախճանած է 1601ին, և թաղուած Հալէպի Ս. Բառասնից եկեղեցիին մէջ, տապանագիրն է հետևեալը.

«Յոր վան. անչափ սիրոյ քոյին.
Բանդ ի կուսէն առեր մարմին.
Աղաչանօք Աստուածածնին.
Թող զյանցանս Տէր Ազարիայ կաթողիկոսին.
Որ և հանգեաւ ի մեծ թվին
ՌԾ աւելորդին.
Յորժամ գայցես աշխարհ կրկին
Յարոյ ըզսա փառօք քոյին.
Զիս զհոգս (?)... պահեա չնորհիւ քոյին»-

(«Հաւաքածոյ» Տ. Բարգէն Եպս. Կիւլէսէրեանի, ձեռագիր)։ Ազարիա կթղ. ընդօրինակած է Յովհան Ծործորեցւոյ Քերականութեան Մեկնութիւնը, որ կը գտնուի ՄՁ. թ. 1219 Ձեռագրին մէջ։

ԱԹԱՆԱՍ ՎՐԴ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ՄԱԼԱԹԻԱՑԻ, Մբ.—Ծ. 1860, Զռ. 1892. Հիւրընկալ, 1904. ՏԲ. 1905. ՏՑ. 1907-1910. ՏՓ. 1911-13. ՏՑ. երկրորդ անգամ. 1913—1922. Ժողովական, 1911—1915. ԺՕ. 1923. կը վախճանի 1927 Մայիս 13։

ԱԹԱՆԱՍ ՎՐԴ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ, ՁԷՑԹՈՒՆՑԻ, Մբ.—Ծ. 1825). Զռ. 1853. ՏԲ. 1861. ՏՌ. 1864, կատարած է եկեղեցւոյն նորոգութիւնը, և այլն. ՏՑՊ. 1869—1870, չինուածապետ 1871—74. 24 կտոր կալուածներ թողած է Յոպպէի մէջ. կը մերժուի Միաբանութենէն 1877. դաւանափոխ կ'ըլլայ 1878ին Կ. Պոլիս (ԱՏԺ. 1878։)